

զինքը արհամարհելու : Ի՞ս նիւթիս  
մէջ թեթև յանցանքն ալ աններելի  
կրնայ ըսուիլ . և այնպիսի յանցաւորին  
պատիժը պէտք է շատ ծանր գայ այն-  
պիսւոյ մը , որ քիչ մը զգացմունք ունի  
սրտին մէջ . վասն զի մէյ մ'ալ նոյն  
յանցանքը ընելու առիթ չորուիր ի-  
րեն : Ի արեկամիդ գաղտնիքը բերնէդ  
հանած ատենդ՝ միտքդ զիր որ բարե-  
կամութիւնն ալ , հաւատարմութիւնն  
ալ , պատիւ , իմաստութիւն և արդա-  
րութիւնն ալ մէկտեղ կ'ելլեն քեզմէ :

Օ գոյշ եղիր ուրեմն և արթուն կե-  
ցիր միշտ , որ ըլլայ այնպիսի խօսք մը  
ըսես կամ այնպիսի շարժուածք մը ը-  
նես , որով գաղտնիքը կերպով մը իմա-  
ցուի . որովհետեւ շատ կերպով կրնայ  
իմացուիլ : Լան որ կը խոստանան գաղտ-  
նիքը պահելու , բայց տեղն որ կու  
գայ՝ երեսնուն վրայ և աչքերնուն մէջ  
կը կարդաս . բան մը չեն ըսեր և ամեն  
բան կ'իմացընեն : Լան ալ , որ պարզ  
կերպով և յայտնի չեն ըսեր , բայց հե-  
ռուանց , մօտանց այնպիսի նշաններ կու  
տան , որ բանը կ'իմացուի . իրենք մըտ  
քերնին կը դնեն՝ որ բան մը ըսին , և  
սակայն լողը ամէն բան իմացաւ .  
կարծես որ կ'ուզեն իմացուի , բայց ի-  
րենք ըսող չսեպուին : Պատ հեղու  
ցուցընեն ալ թէ գաղտնիք մը գիտէ՝  
զայն իմացընել մըն է . կասկածուած  
գաղտնիքը գրեթէ իմացուած է :

Լան այնպիսիք ալ , որ գաղտնիք  
յայտնել չեն սեպեր՝ երբոր իրենց բա-  
րեկամին կամ մէկու մը միայն կ'ըսեն .  
չեն յիշեր ամեննեին թէ իրենց զրու-  
ցուելու ատենը՝ այդ թոյլտուութիւնը  
չտրուեցաւ իրենց , և ոչ այն կը մտա-  
ծեն՝ որ այդ ձամբով շատ առաջ կրնայ  
երթալ գաղտնիքը և մինչև հրապարակ-  
ները ելլել : Ի՞ս այնպիսի գաղտնիք պա-  
հողներէն մէկը կու գայ օր մը ծածուկ  
կը յայտնէ ուրիշի մը՝ իրեն մէկէ մը լը-  
սած ծածուկ մէկ գաղտնիքը , ապրս-  
պըրելով որ ամեննեին մէկու մը ըսի .  
“ Հոգ մի ըներ , կ'ըսէ լողը , անանկ  
աղէկ կը պահեմես ալ ըսածդ՝ ինչպէս  
որ դուն , ” :

Դաղտնիք մը դուրս տրուելու այն  
պիսի վտանգաւոր ժամանակներ կան ,  
որ պէտք է մարդ շատ ջանք ընէ , զգու-  
շանայ , և բոլոր իր խելքն և ուժը թա-  
փէ բերանը բռնելու . մանաւանդ երթ-  
որ բարկութիւնը կամ սէրն է որ կը  
ստիպէն զինքը գիտցածը յայտնելու :  
Այս բարկութենէ շատ աւելի զօրաւոր  
է և վտանգաւոր . բարկացող մը գաղտ-  
նիքը կը յայտնէ . խսկ սիրողի մը բերա-  
նը կը թուլնայ . և թէ որ սաստիկ արթ-  
նութիւն և զգուշութիւն ընէ մարդ ,  
այնպիսի արբեցութեան մը ժամանակ  
բոլոր խոչեմութեան օրէնքներն ու կա-  
նանները կը մոռցուին ու բան մը չմնար  
որ զինքը բռնէ : Այսինքն , զորն որ  
վերը յիշեցինք , այս ճշմարտութեան  
մեծ ու աղետալի օրինակ մըն է :

Լան այնպիսի խեղձեր ալ , որ իրաւ-  
ցընէ կարողութիւն չունին գաղտնիք  
պահելու . քութիւնը բաւական արթ-  
նութիւն մտաց և անդրադարձութիւն  
տուած ըլլալով իրենց , մէկ կողմէն  
պահել ուղածնին՝ մէկալ կողմանէ ա-  
ռանց ուղելու ապշութեամբ մը կամ  
անզգայութեամբ գուրս հանելով , շատ  
հեղու իրենց հետ զուրին ալ խախք  
կ'ընեն : Ի՞ս այնպիսեաց խրատ տալ ,  
զգուշացընելն ալ անօգուտ է , վասն զի  
իրենց ձեռքը չէ . անոնց տեղը պէտք է  
ուրիշները զգուշանան և իրենց այնպի-  
սի բան մը չյայտնեն , որուն դուրս ել-  
լու չեն ուղեր :

### ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Ով որ գաղտնիքդ կը փնտուէ իմանալ՝ կ'ուզէ ըզ-  
քեզ մատնել :

Ի՞նչպէս կրնաս յուսալ որ ուրիշը քու գաղտ-  
նիքդ պահէ , երբ դու իրմէ առաջ բացբերան  
գտնուեցար՝ իրեն յայտնելով :

Իմաստունը իրեն հաւատացուած գաղտնիքները  
կը մոռնայ :

ՊՕԵՄԴ

Բան մը կ'ուզես որ հռչակուի՝ իբրև ծածուկ  
բան մը մէկու մը ականջէն զուրցէ :

ԸԱՐՈՒ